Պարսկաստանի Հայերի ծագման, ուրեմն եւ ԺԷ. դարի մեծ գաղթականութեան պատմութիւնն աւանդել է մեզ յետագաներիս Առաքել Վարդապետ Դավրիժեցին, որ իր պատմութիւնը գրել է 55 տարի յետոյ։ — Առաքել Վարդապետը, բնիկ Դավրիժեցի՝ որի ցեղը մինչեւ այսօր եւս յարատեւում է այդ քաղաքում, Էջմիածնի միաբան էր։ Հայոց ՌԾ, այսինքն՝ փրկչական 1651 թուին՝ Փիլիպպոս Կաթուղիկոսի հրամանով սկսեց գրել իր ժամանակի անցքերի պատմութիւնն եւ չորս տարի աշխատելով՝ բաց թողեց, բայց այդ Կաթուղիկոսի մահից յետոյ, յաջորդ Յակովբ Հայրապետի ստիպմամբ դարձեալ ձեռնարկեց այդ գործին եւ աւարտեց իր պատմութիւնը 1662 թուին։

Այդ պատմութիւնն ամփոփում է իւր մէջ վաթսնամեայ մի շրջան, այն է 1601ից մինչեւ 1662 թիւը։ Նրա մէջ հաղորդուած փաստերին մենք պէտք է ամենայն վստահութեամբ հաւատ ընծայենք, որովհետեւ ինքը պատմագիրը կամ ականատես է եղել կամ լսել է ականատեսներից։ Այդ պատմութիւնը տպուել է անմիջապէս իր վերջանալուց 7 տարի յետոյ, այն է 1669 թուին, Հոլլանդայի Ամստերդամ քաղաքում՝ Ոսկան Վարդապետի ձեռքով։

Այդ մեծ գաղթականութիւնը սկսուեց 1586 թուին եւ կատարուեց 1604—1605 թուին, այսինքն մեզանից ճիշդ 294 տարի